

ՊՈՒՍՏԱՆՈՐԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ	համար
Տարեկան	12 ծր
Վեցամսեայ	6 "
Արսասահեանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Ասերիկայի	համար
Տարեկան	3 ծր.
Վեցամսեայ	1.50 "

Ծանուցումն տողը տուա ջին երեսին համար 40 ս. յոսկ վերջին երեսի համար 20 սանթրիլ է. երեքին աւելցի սեղաւեւերու համար 20 0/0 գեղջ կրչ շալ:

Վառեայի համար ձևոք 40 սանթրիլ

# ՇՆԱԲ

## ՄԱՍԻՆԻ ԱՅԳԱՏՆԵՐ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՉՐ ՏՐՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՐՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՄՈՒ ՕՐԵՐԸ

Նախկին և նորագույն հասցիներ

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արսասահեանի համար  
ձեռք  
( 20 ՍԱՆԹՐԻԼ )  
Պոչկարիոյ համար  
ձեռք  
( 15 ՍԱՆԹՐԻԼ )

Գրութիւնք և սննդ սրտիք

«ՇՆԱԲ»-Ի ԲԱՍՏԱՆՈՐԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ

### ԼՈՒԻՐԵՐ ԿՈՎԿԱՍԵՆ

Թիֆլիզի 8 Սեպտեմբեր 1903

Հայ եկեղեցական կալուածներ ինչպիսիք դեռ առկա է մնում և կացութիւնը հետզհետէ դժուարանում է:

Ռուսական Հայաստանի բոլոր կողմերում ցոյցերը շարունակվում են ուս կառավարութեան այդ սնդիւր միջոցի դէմ: Հայերի վշտի ու զգուշացի չափը մեծ է, անսնելով թէ Ռուսաստանը ինչպէս է վարձատրում այն ծառայութիւնների փոխարէն, որ իրենք Ռուսաստանին մատուցել են պարսից և թուրքերի դէմ պատերազմած միջոցին, երևակայելով որ իրապէս քրիստոնեայ և քաղաքակիրթ պետութեան են ծառայում: Այժմ հայերը հասկանում են որ ուս կառավարութիւնն էլ պարսիկ և թուրք կառավարութեանց պէս բարբարոս է, միայն այն տարբերութեամբ որ այդ բարբարոսութիւնը սքողված է կից ծառայութեամբ ու աւելի վտանգաւոր է, իսկ մահմանականը աւելի անասնական, եւ միթէ աւելի վիրաւորական չէ՝ որ այս դժնդակ անիրաւութիւնը կատարվում է Նիկոլա Բ. ի թաղաւորութեան օրով, որը ինքզինքը խաղաղութեան և արդարութեան պաշտպան հռչակեց, ինչն մենք հաւատում ենք որ պակասութիւնը կայսրինը չէ. նրան ցինիկաբար խաբել են Գալիցիան, Պորեոսոսցեղը և Պէլէն, Մեզ թուում է որ, եթէ կայսրը հիմնովին ճանաչէր այս խնդիրը, այսպիսի մի միջոցը չէ պէտք է հաստատէր:

Այս գործի մէջ ամենամեծ պատասխանատուութիւնը ընկնում է իշխան Գալիցիանի վրա, որը մի ֆանատիկոս է, մի կատաղած խենթ, մի անխիղճ մարդ, որ մեծ զուս է հասցնում Ռուսիոյ իսկական շահերին:

Ի միջի այլոց ահա խնդրի պատմութեան համառոտ բովանդակութիւնը:

1898ին իշխան Գալիցիան առջին անգամ այս հարցը բարձրացրեց, կայսրը անհրաժեշտ համարեց, նախ քան որոշում տալը, խնդիրը մի լաւ քննել և այս նպատակով մի լանձնաժողով կազմեց ձեռնարկով անգամ Գալիցի նախագահութեամբ, Յանձնաժողովը միաձայնութեամբ առաջարկը բացատրեց:

Վերջը խնդիրը յանձնվեց պետական խորհրդի քննութեան, մեծ իշխան Ռիխտէլ Նիկոլայեւիչի նախագահութեամբ, կովկասի նախկին փոխարքայ, լուսաւորեալ ու արգարագատ մարդ: Պետական խորհուրդն էլ մերժեց Գալիցիանի ծրագիրը:

Մտն անցնալնքս նոյն Գալիցիանը այդ ծրագիրը առաջարկեց նախարարական խորհրդին, ուր մեծամասնութիւնը կրկին հակառակ գտնվեց: Իշխան Գալիցիան չուզեց յայտնված լինիլ, այս գործը իրեն համար պատուոյ խնդիր չի նկատեց, նա յաջողեց, յենվելով Պորեոսոսցեղի և Պէլէի վրա, Յարին համոզել և ուկազը կորզել:

Կարծվում է որ Գալիցիանը Յարին համոզել է այս միջոցի միակ նպատակը հայ եկեղեցու շահը ցոյց տալով (!) և վերջապէս եթէ հայերին հաճելի էլ չը լինէր, սրանք ոչխարային համակերպումով պետք է հնազանդէին կայսրը հրամանին:

Գալիցիանը ինքզինքը խաբում էր և գիտակցաբար խաբում Եարին: Հայերը երբէք ոչխարի պէս չեն գործում, երբ նրանք նիւթապէս կարող են իրենց իրաւունքները պաշտպանել: Նըրանք այդ ապացուցեցին և դեռ կապացուցեն:

Կաթողիկոսը շարունակ մերժում է իր համաձայնութիւնը ուկազին ենթարկվելու: Կառավարութիւնը 7 օր յամանակ էր նշանակել իր պատասխանի համար, Չորրորդ օրը Սինոդի պրոկորը ներկայանում է կաթողիկոսին իմանալու համար թէ պատասխանը պարտաւոր է կաթողիկոսը

նրան անիծում և սրտաքամ է: Պրոկորը լինելով շեմեոսեղ մարդ՝ պաղատում է կաթողիկոսին որ անէժքը ետ վերցնի, անելով. «միթէ չէ՞ք զթում ինձ. ես հինգ երեխաների հայր եմ»:

«Իսկ դուք, դուք զթացիք ինձ, ինձ, որ հինգ միլիոն զաւակների հայր եմ, ոչառասխանում է կաթողիկոսը: Ու դրանից յետոյ կաթողիկոսը անմիջապէս Գալիցիանին իմաց է տալիս որ այլևս իրեն հետ գործ չէ ուզում ունենալ և ըստ Պորեոսոսցեղի, այսուհետեւ ուղղակի ներքին գործոց նախարարի հետ պէտք է շարունակէ իր բանակցութիւնները: Եթէ Ռուս կառավարութիւնը պնդէ իր առաջարկի վրա, կաթողիկոսը և Սինոդի անդամները պէտք է հրաժարական տան:

Եւ այս պարագային հայերը իրենց հոգեւոր բարձրագոյն պետ պէտք է ճանաչեն Սինոդի կաթողիկոսին:

Գալիցիանը աւելի հայ հարուստներ, որոնք կարեւոր գումարներ էին կտակել Ռուսահայ եկեղեցիներին և զպրոցներին, շտապել են իրենց այդ կտակները ոչնչացնել:

Վերջին խօսք ևս. Արդեօք հայ ժողովուրդը կաթողիկոսի կամ թէ Պորեոսոսցեղի միջոցով չէ՞ կարող պիտէլ Լահէի իրաւարար ատեանին այս խնդիրը լուծելու համար: Ընչտ է, հայ ժողովուրդը մի անկախ պետութիւն չէ կազմում, բայց Տուրքիին Լորանտօի խնդրի միջոցին ֆրանսացի հռչակաւոր ազատամիտ հրապարակաստները առաջարկեցին այդ խնդիրը Լահէի ատեանին յանձնել: Այն ինչ որ կարելի էր համարվում երկու անձնաւորութիւնների համար, անշուշտ հնարաւոր է մի ամբողջ ժողովրդի համար, որը շատ աւելի կարեւոր մի անձնաւորութիւն է կազմում, քան թէ Պորեոսոսցեղի բանակիրները: Մանաւանդ որ հայ եկեղեցական կալուածների խնդիրը միայն Ռուսահայաստանի հայերին վերաբերող և ներ-

քին խնդիր չէ, այլ վերաբերում է ամբողջ աշխարհի հայերին: Լահէի ատեանը, որը հիմնված է Նիկոլա Երկրորդի նախաձեռնութեամբ, միջազգային խնդիրների մէջ արդարութիւնը յաղթանակել տալու համար, հէնց այս հարցը լուծելու համար է:

«Նորոսպիկն» Թիւ 94

Տիֆլիսէն վիճենայի «Էնֆորմասիօն» թերթին կը գրեն:

«Կովկասի հայ եկեղեցիներու ինչքերուն ուս կառավարութեան կողմէ գրաւումը ցաւագին տպաւորութիւն մը առաջ բերած է ամբողջ աշխարհի հայերուն վրայ: Ազգային եկեղեցիներ տրուած այս հարուածը լնդհանուր շայրոյթ պատճառած է: Որովհետեւ այդ ինչքերը կը բաղկանար ոչ ուս հայերու կամաւոր նուէրնօրէ, ասոնք որոշեր են բողոքել էլ միաժամի կաթողիկոսին, ուսական կառավարութեան այս ապօրէն արարքին դէմ: Նոյնպէս Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Տ. Մաղաքիա Ս. Օրմանեան պարտք սեպած է բողոքել եկեղեցիի գերագոյն պետին՝ Թուրքիոյ հայոց անունով: Ըստ իսկ Կովկասի հայերն ալ, որոնք մինչեւ հիմայ կրտորական գիրք մը կը բռնէին ուսական կառավարութեան ձեռք առած բոլոր միջոցներուն հանդէպ, կարգ մը գաղտնի գումարումներ ըրեր և կաթողիկոսին հակացուցեր են թէ պէտք է հրաժարի:

«Հայ եկեղեցիներու ինչքերուն գրաւումը ուս կառավարութեան ստալին թշնամական արարքը չէ հայ ազգին հանդէպ երկար տարիներէ ի վեր բոլոր հայ դպրոցները փոկուած և ուսուցիչները ու աշակերտները փոխուած են արդէն: Հիմայ ուս կառավարութիւնը իր ձեռքը կը գնէ հայ ազգային ոգիին վերջին ապաւէնին՝ հայ եկեղեցիին»



ձեռքում գտնուում էր մի սրբուհի... Կիր յայտարարութիւնները, կէսօրին ցրուուած, կը հրաւիրէին հասարակութիւնը Յի կիրակի առաւելագույն իրենց գուէները տալ:

Այս անգամուան քանտիտաներուն մէջ բնաւ մարդ չկար: Չերկարեմ, ձիւրկալէի մէջ բնորոշութիւնը 40-ը կանցնի ապահովաբար, բայց առնց կէսը սրանի չխառնուող անդամներն են — հազիւ 75-80 հոգի մը մասնակցած է ընտրութեան և 40-էն քուէով պատուիրակ բնորոշութեան է: Տիրաբար պատու էր անոր:

Մնացածը մեր և ուրիշ քաղաքներէ:

Յիւլիպէ 4 Անպահւելիք 1903

Պատգամաւորութեան անթիւ տեղի ունեցած «խաղը» մանրամասնորէն նկարագրուած էր ասկէ՝ «Շարժում»-ի մէջ: Կը կարծէինք թէ մեր պատ. մասնախումբը, ինչպէս նաև վահան վարդապետը հասարակութեան մէջ չբնած արտուայնները նկատի առնելով պիտի աշխատին մտեանս յիշ մը օրինաւորութեան:

Ընդհակառակը օգոստոս 30 թուա-

կիր յայտարարութիւնները, կէսօրին ցրուուած, կը հրաւիրէին հասարակութիւնը Յի կիրակի առաւելագույն իրենց գուէները տալ: Այս անգամուան քանտիտաներուն մէջ բնաւ մարդ չկար: Չերկարեմ, ձիւրկալէի մէջ բնորոշութիւնը 40-ը կանցնի ապահովաբար, բայց առնց կէսը սրանի չխառնուող անդամներն են — հազիւ 75-80 հոգի մը մասնակցած է ընտրութեան և 40-էն քուէով պատուիրակ բնորոշութեան է: Տիրաբար պատու էր անոր:

Թէ մեր հիմնական պատուիրակը հասարակութեան պահանջներուն, ձգտումներուն, ցաւերուն գիտակից չէ. ապա օրօրոցին տղան ալ գրակ իսկ թէ իբր ընտրողական մարմնոյ անդամ չուն գծուելիք օրէնքներուն մասին չի կրնար կարծիք մը պաշտպանել, ստ ալ ինք մեզմէ աւելի լաւ կը հասկնայ:

Անդին կը մնայ միայն քուէ մը տալու ինքիբր ևս, կամ այն վարդապետին համար:

Առանց օրինաւորութեան կամ ապօրինութեան հարցեր յարուցանելու և նորանոր բարդութիւններու տեղի առնել, կը բազմաք որ էզնականը լաւ ըմբռնէ իր զերը՝ զոնէ քուէ տուած վարդապետին. չի խաբուի վահան վարդապետի շողոքորթ խօսքերէն և քուէ տալ արժանատի եկեղեցականին մը:

Իր վրայ նուիրական պարտք մը կը ծանրանայ, կրնայ տեղեկութիւններ առնել, այս կամ այն վարդապետի մասին և ըստ այնմ քուէ տալ:

Պարտաւոր է ասկէ ետք հետեւի մեր մամուլին և հոն առաջնորդական խնդրին մասին յայտնուած կարծիքները կարգաւ, խորհիլ:

Ներկային մէջ ամբողջ Պուլկարահայտութեան գիտակից տարրի համակրութեանը ներքէս Ասլանեանի կողմէն է. իսկ վահան վարդապետ Յարութեանի մասին գրուածները շատ գէշ գաղափար կուտան իր մասին:

Սե այն ձգտումներ որ ցոյց կուտայ վահան վարդապետ, այնքան բաներ գրուելէն ետքն ալ, յաջողցնելու համար իր ընտրութիւնը խիստ գէշ հնարակար մը կը պատկերացնէ մեր աչքին ստիւն:

Պէտք չի մտնուար հիմնական ըսկսած և կրի վահան վարդապետի մասին:

Մնացածը մեր և ուրիշ քաղաքներէ:

րու պատգամաւորներուն խղճին կը թողուի:

Կալուածներու գրուածն անթիւ հոս ալ դրական քայլ մը աննելու համար քանի մը երիտասարդներ կը դիմեն վահան վարդապետին:

Վահան վարդապետ կարգ մը ասխու վարդապետներն ենք — որոնց մէջ խմբագիրներն ալ բաժին մը ունին — կը յայտնէ որ օգոստոս 31 կիրակի օր եկեղեցիին մէջ ատոր վրայ կը խօսի և եկեղեցիէն ետքը մասնախումբը և քանի մը անձեր հարկ եղածը կը կարգադրեն ձիւրկալէի հայտութեան կողմէ:

Կանցնի քանի մը օր, ձայն ձուն չի կայ: Մէկ երկու երիտասարդ նորին կը դիմեն արդիւնքը տեղեկանալու համար:

Վահան վարդապետ կը պատասխանէ որ Կաթողիկոսի ընտրութեան մասնակցող թւումը — որոնց մէջ Պուլկարահայտ ալ — կը պատրաստուին հանրագործութիւն մը զրկել, քանի մը օրէն առ հանրագործութիւնը կը հասնի և ինք կը ստորագրէ Պուլկարահայտ գաղութիւն կողմէ:

Դեռ չենք գիտեր թէ ինչ արդիւնք կայ:

Բայց կը մտածեմ որ, առ բանին հետ մէկտեղ, շատ լաւ կըլլայ նաև պատրաստել հանրագործութիւն մը — ինչպէս ըրին վառնա — և մասնախումբին միջոցաւ ստորագրել ալ քաղաքիս հայերուն ու զրկել, որով ձիւրկալէն, վառնան և այլն առանձին առանձին ալ ուժ տուած կըլլան գործին:

Թղթակից

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ատրիանուպոլիս 8 սեպտ.

Մակեդոնական ամեն մի փոկրիկ յաջողութիւն մեզ ուրախացնում է, որովհետեւ նրանով թորքերի ճակատագրի վերջակէտին մտանալն է թուում մեզ: Գուրէլի, Պուրկազի գէպքէն ի վեր ահ ու սարսափի մէջ մնացած է բոլոր թուրք տարրը, կառավարողութիւնը նապաստակի սրտով է հետապնդում լեղափոխականներու քայլը. ամեն քայլա-

փոխին ուղմբի ահարկու պատմութիւնը աչքի առջեւ է բերում. սոյն բոցավառ երեւակայութիւնն ահէն անբաժին չէ մնացած նաեւ հասարակ զինուորը. այժմ էն քան զամ որ յեղափոխականներու հետապնդման պայտօնն է ստանում ահ ու զոյով, սկսածայ է զէնք առնում, այնպէս են պատմում իրենց շրջանակի մէջ թէ սյդ մարդիկը ամէն մէկ անկիւն զետեղած ուղմբեր ունին, թէ շատ ճարպիկ են եւն... Հակառակ զինուորականներու գրեթէ յուսահատիչ զազափարին, կառավարութիւնը ահարկու պատրաստութիւններ է տեսնում պատերազմի. ամեն օր նոր նոր զինուորներ են գալիս, առջի օր 3000 հոգի է բազկացեալ նոր զազանութեան համարիչ հեծելազորքը եկաւ, և երկ զեռ յաջորդ տարու զինուորական վարձարանի շրջանաւարտցու երիտասարդներէն 300 նոր զինուորներ եկան:

Միլիթարիզմի արդի զինեալ վիճակը եթէ տարի մը տեւէ արդէն ինքնին փչացած պիտի ըլլայ Ռուսիոյ. զինուորները որոնք հիմայ իսկ կանոնաւոր չեն վճարուիր, քիչ ժամանակ վերջը անթիւ չի մնալու համար չի պիտի քայլին խեղճ ժողովուրդը կեղեքելէ, այս մեթոտով Մերոպոլի երեսին հեզնական բարենորոգումը ցոյց տուած պիտի ըլլայ հիւանդ մարդը և պիտի հասնի իր այն ահաբի ժամը, որը մեր փափագածն է: Տեղացի յոյները, որոնց նկարագիր արդէն վատութեամբ չազախած է, խիստ թշնամութիւն են ցոյց տալիս պուլկարներու և 200 հոգի կամաւոր են գրուել հարկ եղած աստե թուրքերի օգնելու համար. ասոնք ունին այն նախազգացումը թէ Պուլկարիան երբ հոս գայ իրենք կորսուած են. սյդ արդէն բնական է. ոնէ մեղաւոր ստանց պատիժի չէ մնում:

Քոված միջամտեց Շուտեանը: — Ինչու՞ չը պատմեմ. զու բարկանում էիր, երբ ես երկու փոքրերի համար փաստաբան լստած քարտեանից երեք բուրլի պոկեցի: Պատմեմ որ հասկանաս թէ մեր հասարակութեան մէջ բարեգործութիւնը և օգնութիւնը զօրով պէտք է անել տալ. համոզեմ որ իրապէս շնից մի մագ պոկելն էլ շահաւոր է: Ինչի՞ ես գրգովում, Այո, ես ուրիշ բանի համար չեմ գիտի փաստաբան Գերոտեաններին, բայց թշնամութիւն այն վրէժիքով, այլ հարաւորութիւն ունենալ գրանց կը թալանեմ, կը կողոզպեմ վահանիկներին տալու համար: — Բա է, բա, արդէն հասանք: Ընդմիջեց Շուտեանը և մտեցաւ մի շքեղ դրան:

(Շարունակելի)

անպիսի տարբերութիւն կայ: Ճիշտ է. մեր բարեգործական ընկերութիւնը և բարեգործ անհասները կարող էին աւելի դրական օգնութիւն հասցնել. բայց ո՞վ է որ պէտք է մտածէ այդ բարդ գործի վրա. մեր քուէակի բարեգործները, որոնք զբրամ են շարունակ, միայն գաղթականների թշուաղ կերպարանքից վարկեան առաջ ազատվելու համար: Ես մի օր որոնցի մտիկից գաղափար կազմել այս տեղ հասարակած գաղթականների վիճակի մասին. պըտտեցի շատ բնակարաններ. Աստուած ընտանեակներ համարի. անտայ այնպիսի թշնամութիւններ, որ ոչ մի գիշ և լեզու կարող է արտայայտել. և այդ թշնամութիւնները աւելի ծանր են նեթակայ եղողներին, որովհետեւ նրանք մեծ յոյսերով եկել են թիֆլիզ. մեծ կարծիքներ են ունեցել թիֆլիզի վարձար և հարուստ հայի

բարեգործութեան, աւելի ճիշտ բարեսրտութեան վրա. և խկապէս թշնամութեան հանգէպ աւելի բարեւերաւ մարդիկ են հարկաւոր. քան թէ բարեգործ. Օգնութիւնը, դրական օգնութիւնը իսկոյն, այն վարկեանին երբ նա զեռ սովորական չէր գարձել, պէտք էր հասցնել. Այսօր արդէն ուշ է. թրքահայ գաղթականը այլևս չի հետաքրքրում թիֆլիզի բարեգործին. նրան հասած գոբաղթութեան գունազեղ նկարագրութիւնը կորցրին իրենց ազգեցութիւնը, ոչ ժը, ի թիւացած նեարդիբը միայն միանգամ ցնցվեցին, ու այսօր կրկին թմրած են: Ես լաւ յիշում եմ, առաջի օրերում, երբ գաղթականներ էին գալիս ունէ խմբագրատուն, բարեգործական ընկերութեան գրասենեակը, կամ մի բարեգործ հայի տուն, ամենքն էլ հետաքրքրվում էին նրանց վիճակով. նրանց հետ պա-

տանած սարսափելի դէպքերով, նոյն իսկ տրտամում էին: Բայց այսօր այլևս այդպիսի նշաններ չը կան. ոչ միայն չը կան, այլ օգնութիւն խնդրողները ունկնդրութեան չեն արժանանում: Տեսար. ինչ սասց փոքրիկ վահանիկը. արգեցիներ, երգեցիներ, բայց ոչ մի զուռ չը բարձրց, և ոչ մի պատուհան: Խանութները զուռս չեկան, մեզ փարա մը տուող չեղաւ: Եթէ կիները այդպէս են դարձել, հապա այդ մարդիկ ի՞նչ պէս են: Մինչդեռ այդ երգիչներն ու պարողները՝ առաջին օրերում, երբ զեռ հետաքրքրել էին, երբ արտակարգ էին, հարթոյնք, միող, ուտելիք, դրամ և հագնելիք էին ստանում: — Թող, էլ մի պատմիր, այլևս անկարող եմ լսել. մանրամասնութիւններն էլ մի մտնի, անսնում եմ որ լեզուդ բացվել է, գրեթէ զը-

տանած սարսափելի դէպքերով, նոյն իսկ տրտամում էին: Բայց այսօր այլևս այդպիսի նշաններ չը կան. ոչ միայն չը կան, այլ օգնութիւն խնդրողները ունկնդրութեան չեն արժանանում: Տեսար. ինչ սասց փոքրիկ վահանիկը. արգեցիներ, երգեցիներ, բայց ոչ մի զուռ չը բարձրց, և ոչ մի պատուհան: Խանութները զուռս չեկան, մեզ փարա մը տուող չեղաւ: Եթէ կիները այդպէս են դարձել, հապա այդ մարդիկ ի՞նչ պէս են: Մինչդեռ այդ երգիչներն ու պարողները՝ առաջին օրերում, երբ զեռ հետաքրքրել էին, երբ արտակարգ էին, հարթոյնք, միող, ուտելիք, դրամ և հագնելիք էին ստանում: — Թող, էլ մի պատմիր, այլևս անկարող եմ լսել. մանրամասնութիւններն էլ մի մտնի, անսնում եմ որ լեզուդ բացվել է, գրեթէ զը-

